155. ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ

Գիտնական մե հրտ գեղացուն նստած՝ կը զրուցե, գեղացին ինչ օր կըսե՝ ըդի չավտընա, յա կասկածով կընդունե, չըմքի ինքն այբ-բեմ-գեմ գինա, ընի չի գի՛նա։ Գեղացին կը տեսնա՝ ինքն ինչ օր կըսե, գիտնական կը տանե-բերե զգլուխ։

Օրն արև-արեգակ կէղնի, ամպի կտոր չը ճարվի աչքի գեղու համար, գեղացին կիշկե էրկինք, կըսե.

— Անձրև պտի գա։

— Չէ-չէ՛, կարկո՞ւտ,— կը ծիծղա գիտնական։

Վախտ մե գընցնա, չընցնա՝ դեզ-դեզ ամպեր գելնան, օրոտում կը բռնե չորս դեն, հմա՞լ անձրև մե կը թափի, կըսիս էրկինք պատռի, գառձի հեղեղ, գիշնա վըր էրկրին։

— Ի՞մալ ֆիմցար,— կը զարմանա գիտնական։

— Օղո՛րդ է,— կըսե գեղացին,— կարդալն էփուկ հաց է՝ ղըուկ քու ծոց, հմա քըզի չէ՛ թե խելք, լե փորձ ու մեծին լսելու ֆանկաջն է կը պակսի։